

ըովը միասին կնազակիրներու օգնութեան գնաց Անտիոքի ութամսեայ (1097-1098 յունիս 3) պաշարման ժամանակ (1), եւ այս առիթով Կոստանդին Ծոանկներէն ստացաւ կոմսութեան պատիւ եւ միեւնոյն ժամանակ մարքիզութեան տիտղոս, ինչպէս կը վկայէ Վահրամ Բարուն, տող 193—198 .

« Եւ ի Ծոանկաց աղգէն պատուեալ ,
 Որ ի ծովուն յայտկոյս անբեալ .
 Որոց եղեւ նիզակակցեալ ,
 Ընդգէմ Թուրքին պատերազմեալ .
 Ում կոմսութեան պատիւ չնորհեալ ,
 Գունդ եւ մարգիզ վերածայնեալ » :

Կնազակիրներու արշաւանքներէն ո՛ր եւ է օգուտ չքաղեց տեղացի ժողովուրդը , այլ իրենք կնազակիրները՝ միմիայն այս Առաջին կնազակրութեան իբր արգիւնք՝ կէս միլիոնի մօտ անձի կորուստ պատճառելէ եւ երկրին մէջ ի նպաստ իրենց չորս առանձին իշխանապետութիւններ հաստատելէ զառ բան չըրին : Այս չորս իշխանապետութիւններն էին՝ 1) Երուսաղէմի թագաւորութիւնը, 2) Անտիոքի իշխանապետութիւնը, 3) Եղեսիայի կոմսութիւնը եւ 4) Տրիպոլի կոմսութիւնը : Ետքէն ասոնց վրայ աւելցան նաեւ ուրիշներ,

եւ յայնժամ իշխանին , որ կային բնակեալ ի Sornu լեռոն , Կոստանդին որդին Ռուբինայ , եւ երկրորդ իշխանն Բագունի , եւ երրորդ իշխանն Օշինն , սոքա զամենայն կարիս կերակրոյ առաքեին առ զօրապետն Փռանգաց . նոյնպէս եւ վանորայն Սել լերինն կերակրօք օգնեին նոցա , եւ ամենայն ազգք հաւատարմեան բարեկամութիւն ցուցանեին առ նոսա : »

(1) Dulaurier, *Rec. des Croisades, Doc. arm.* Paris, 1869, ներածութիւն եր. ԾԱ : Այսպէս կրսէ նաեւ Սամսոն Շօեյլ . Անսիոքի առջեւ « զօրաց գլխաւորք ի խորհուրդ մտանելով հրեշտակ առաքեցին առ Կոստանդին արքայ Հայոց , որ իրազեկ լինելով նոցա ստապանաց՝ ուղարկեց կնազակրաց ուսելիք եւ պարեմք : Այս պատճառաւ Լասինք քաղաքը առնելէն զկնի յոյցին առ նա բազում քնծայս ի կողոպտից քաղաքին ու անուանեցին զնա Marquis, մարքեզ , Chevalier, ասպետ , եւ Consul, հիւպատոս Հայոց : » (*Պատմ. կնազակրութեան* Եւն. , քրգմ. Հ. Առաքելեան . Վրդապ. 1874, եր. 49.) Իսկ Michaud (Անդ , եր. 138) կրսէ քե Կոստանդին իւ մարտիկներով մասնակցած է Եղեսիայի՝ պատերազմին :